DOI: 10.59560/18291155-2025.2-45

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի
աշխատակազմի ղեկավար,
Հայ-ռուսական համալսարանի դոցենտ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՎԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման դեմ ուղղված հանցագործությունների մի շարք նրբերանգների ուսումնասիրմանը: Հետազոտելով հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման հիմնախնդիրների առանձնահատկությունները՝ փաստվում է, որ քաղաքականության ոլորտում իրավական կարգավորումների սահմանադրականացման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջացել հիմնահարցի շուրջ ձևավորել նոր մոտեցումներ:

Հիմնաբառեր. հանրային իշխանություն, հանցագործություն, իրավունք, քաղաքականություն, պետություն:

1. Ներածություն

Գաղտնիք չէ, որ հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման դեմ ուղղված հանցագործությունների հիմնախնդիրները սրվում են հատկապես նախընտրական շրջանում: Այս առումով, էլ ավելի է խորանում նշյալ ոլորտում հանցագործությունների կանխարգելման անհրաժեշտությունը:

Հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման խնդիրների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար, առաջնահերթ անհրաժեշտ է ուսումնասիրել նաև անտիկ աշխարհի փորձը, ինչը ապացույցն է այն բանի, որ քաղաքական հանցագործությունների կանխարգելումը և քաղա-

քական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման հիմնահարցերը անտիկ շրջանից առ այսօր չեն կորցրել արդիականությունը: Ավելին, հաշվի առնելով քաղաքական հանցագործությունների ճյուղավորման արդի միտումները, դրանց աշխարհագրության և որակի փոփոխությունները, ինչպես նաև քաղաքական ոլորտի նոր քաղտեխնոլոգիական և մանիպուլյացիոն ռիսկերի առկայությունը՝ գնալով էլ ավելի է ընդլայնվում նաև քաղաքական հանցագործությունների սուբյեկտների շրջանակը:

Ընտրական մարմինների ձևավորման գործընթացի և ժամանակակից ժողովրդավարական հիմքերի համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքականության ոլորտում հանցագործությունների կանխարգելումը անկյունաքարային նշանակություն ունի հատկապես արդի պայմաններում:

2. Անտիկ աշխարհի փորձը

Անտիկ ժամանակներից առ այսօր հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման խնդիրները եղել և գտնվում են մասնագետների ուշադրության ներքո: Արդեն իսկ անտիկ դարաշրջանի մտածողներն սկսել էին դատողություններ անել կառավարման ճշմարիտ և ոչ ճշմարիտ ձևերի, կառավարիչների դերի և որակների մասին, ինչի հետ էլ կապում էին հասարակության և պետության զարգացումն ու բարգավաճումը[1]: Օրինակ՝ Պլատոնը քաղաքականության համար որոշիչ էր համարում մարդկանց կառավարելու ունակությունը, այսինքն՝ համապատասխան գիտելիքների առկայությունը[2]: Միևնույն ժամանակ, Պլատոնը խելամիտ էր համարում կանանց ընդգրկումը պետության իշխող դասի մեջ՝ համարելով, որ նրանք ունեն նույն առաքինություններն ու կարողությունները, ինչ տղամարդիկ, բացառությամբ միջին կնոջ և միջին տղամարդու ֆիզիկական ուժի տարբերությանը[3]: Ի հակառակ Պլատոնի՝ Հին Հունաստանի մեկ այլ անվանի մտածող՝ Արիստոտելը, դեմ էր կանանց և բոլոր նրանց, ովքեր հարստության և կրթության բացակայության պատճառով ի վիճակի չէին ինքնուրույն խելացի որոշումներ կայացնել, քաղաքական իրավունքներով օժտելուն: Ավելին,

[1] **Мирумян К.А.** История политической науки. Часть 1: Эпоха античности. - Ереван: Издательство РАУ, 2004. - 299 с.

[2] **Plato**, Statesman. 311 p., http://www.perseus.tufts.edu/hopper/text.jsp?doc=Perseus%3Atext%3A1999.01.0171%3Atext%3DStat.

[3] **Thomas R. Martin,** An Overview of Classical Greek History from Mycenae to Alexander / M.R. Thomas. - TRM OV 15.8, http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=TRM+OV+15.8&fromdoc=Perseus%3Atext%3A1999.04.0009

Արիստոտելը քաղաքացի էր համարում միայն նրանց, ովքեր և՛ որպես քաղաքացի, և՛ որպես պաշտոնյա գործնական գիտելիքներ ունեին հասարակության քաղաքական կազմակերպման և պոլիսի կյանքի վերաբերյալ: Քանի որ յուրաքանչյուր քաղաքացի, ըստ Արիստոտելի, «պետության մասնիկ» է՝ պետությունը պետք է զբաղվի բոլոր քաղաքացիների դաստիարակությամբ՝ ձևավորելով համապատասխան քաղաքացիներ, ովքեր պարտավոր են ակտիվ մասնակցություն ունենալ պետական գործերին՝ ցուցաբերելով կա՛մ քաղաքական, կա՛մ ճանաչողական գործունեություն[1]:

Անվանի հույն մտածողների մոտեցումներից պարզ է դառնում, որ անտիկ ժամանակաշրջանից ի վեր քաղաքական հասունության և քաղաքական գիտելիքներին վերաբերող խնդիրները մշտապես գտնվել են իմաստունների ուշադրության կենտրոնում: Այս համատեքստում, եթե Պլատոնը համապատասխան գիտելիքների պահանջը վերագրում էր միայն նրանց, ովքեր հավակնում են քաղաքական իշխանության, ապա Արիստոտելը էլ ավելի բարձրացրեց նշաձողը՝ պահանջելով քաղաքական գիտելիքներ բոլոր այն քաղաքացիներից, ովքեր մասնակցում են իրենց կառավարիչների ընտրությանը:

3. Հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման արդի խնդիրները

Հասարակության քաղաքական հասունության, քաղաքական գործունեության վերաբերյալ համապատասխան գիտելիքների և որակների առկայությունը քաղաքական իշխանության հավակնորդների ու ընտրական իրավունքով օժտված քաղաքացիների համար էլ ավելի մեծ կարևորություն են ներկայացնում արդի պայմաններում: Եթե քաղաք-պետություններում քաղաքական իշխանությունը ձևավորվում էր ուղղակիորեն[2], այսինքն՝ մենք գործ ունեինք ուղիղ ժողովրդավարության հետ, ապա մեր օրերում, ինչպես արդեն ասվել է, մենք գործ ունենք քաղաքական իշխանության հետ, որը ազատ ընտրությունների հիման վրա մի դեմոկրատից անցնում է մյուսին[3]: Հենց այս տեսանկյունից և այս համատեքստում է, որ քաղաքական իրավունքների

[1] **Aristotle,** Politics /translated by Benjamin Jowett / p. – 181, https://socialsciences.mcmaster.ca/econ/ugcm/3ll3/aristotle/Politics.pdf

[2] **Сырых В.М.** Теория государства и права. - Москва: Юстицинформ, 2006. - С. 12.

[3] **Арутюнян А.Р.** Международные методологические основы избирательного права (От античности до современности: философско-правовое измерение) // Мудрость. – 2(19)2021.

իրացման դեմ ուղղված և քաղաքական հանցագործությունների հիմնախնդիրները հիմնարար բնույթ են ստանում: Վերը նշված խնդիրների իրավական կարգավորումը օրենսդրական բարձրագույն մակարդակով, այդ թվում՝ քրեաիրավական, կարևոր են ինչպես հանրային իշխանության ընտրովի մարմինների բնականոն ձևավորման, այնպես էլ քաղաքական կառավարման ողջ ընթացքում:

Այս ոլորտի կարգավորման պարտավորությունը առաջնահերթ պայմանավորված է ժամանակակից ժողովրդավարական պետությունների Սահմանադրությունների այն դրույթի հետ, ըստ որի՝ «իշխանությունը պատկանում է ժողովրդին և, որ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով[1]»: Այսինքն՝ այս դրույթով են նաև բարձրագույն իրավական մակարդակով երաշխավորվում քաղաքական իրավունքներն ու ազատությունները, որոնք պատկանում են բացառապես բոլոր քաղաքացիներին (ովքեր հասել են այդ իրավունքների իրականացման համար օրենքներով սահմանված տարիքին)՝ անկախ սեռից, ազգությունից և ռասայից, և որևէ մեկը չի կարող վերջիններին զրկել այդ իրավունքներից, բացառությամբ՝ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված դեպքերի: Վերոգրյալով է պայմանավորված այն տեսակետը, որ քաղաքական իրավունքների իրացմանն ուղղված ցանկացած խոչընդոտ կարելի է որակել ոչ միայն որպես հանցագործություն մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, այլև սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ: Այս առումով քաղաքական իրավունքների իրացման ոլորտում քրեաիրավական կարգավորման խնդիրները մեծ նշանակություն են ստանում, քանի որ քաղաքական իրավունքների իրացման դեմ ուղղված հանցագործությունները ուղղված են ոչ միայն ու ոչ այնքան որոշակի թվով քաղաքացիների քաղաքական իրավունքների իրացման, որքան հանրային իշխանության մարմինների ձևավորման դեմ:

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Հոդված 2, Ընդունվել է 06.12.2015 թ. հանրաքվեով, https://concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra/sahmanadrowt-yown-2015-t-vakani-dektemberi-6-i-hanrak-veov-endownvats-p-op-okhowt-yownnerov

4. Քաղաքականության ոլորտում քրեաիրավական կարգավորումների սահմանադրականացումը

Քաղաքականության ոլորտում քրեաիրավական կարգավորումների սահմանադրականացումն ապահովելու համար առաջնահերթ անհրաժեշտ է սահմանել, թե ի վերջո, որ արարքներն է անհրաժեշտ դիտարկել որպես քաղաքական իրավունքների դեմ ուղղված: Այս համատեքստում, կարելի է առաջարկել քաղաքական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների հետևյալ սահմանումը. «Քաղաքական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունը սոցիալապես վտանգավոր արարք է, որն ուղղված է քաղաքական իրավունքների իրացման և հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման դեմ ու նախատեսված է այս կամ այն պետության քրեական օրենսգրքով»: Ընդ որում, եթե այլ հանցագործությունների դեպքում մեղավորությունը կարող է դրսևորվել ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ, ապա քաղաքական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների դեպքում տեղի է ունենում բացառապես ուղղակի դիտավորություն:

Ինչ վերաբերում է քաղաքական հանցագործություններին, ապա քաղաքականության աշխարհը, որպես ամբողջություն, որպես հասարակական կյանքի ենթահամակարգ, քրեագիտության և, մասնավորապես, դրա զարգացող ճյուղերից մեկի՝ քաղաքական քրեագիտության ուսումնասիրության օբյեկտ է[1]: Չնայած այն հանգամանքին, որ ժամանակակից իրավական գրականության մեջ «քաղաքական հանցագործություն» հասկացության նկատմամբ միանշանակ մոտեցում չկա, քրեագիտական գրականության մեջ քաղաքական հանցագործությունը հասկացվում է որպես հանցագործություն, որը կապված է բացահայտ գործողությունների/անգործության հետ, որոնք վնասում են պետության, նրա կառավարության կամ քաղաքական համակարգի շահերին: Այնուամենայնիվ, «քաղաքական քրեագիտություն» հասկացության հիմնադիր Դ.Ա. Շեստակովն առաջարկում է քաղաքական հանցագործությունները բաժանել երկու խմբի.

- պետության և նրա պաշտոնատար անձանց դեմ ուղղված հանցագործություններ,

[1] **Зорин А.В.** Криминология политической преступности как частная криминологическая теория. - С. 88, https://cyberleninka.ru/article/n/kriminologiya-politicheskoy-prestupnosti-kak-chastnaya-kriminologicheskaya-teoriya/viewer

▪ պետության և նրա ներկայացուցիչների հանցագործությունները բնակչության դեմ[1]:

Ներկայացված մոտեցման տրամաբանությունից կարելի է եզրակացնել, որ քաղաքական հանցագործությունների առաջին խումբը ներառում է սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, որոնք դրսևորվում են այն հասարակական հարաբերությունների վրա ոտնձգող գործողությունների տեսքով, որոնցով ապահովվում են սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության կայունությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունը[2]:

Հանցագործությունների երկրորդ խումբը ներառում է մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները, որոնք նախատեսված են մի շարք պետությունների քրեական օրենսգրքի Հատուկ մասով և սահմանվում են որպես սոցիալապես վտանգավոր գործողություններ, որոնք խախտում են պետության կողմից երաշխավորված մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները[3]:

Չնայած այն հանգամանքին, որ Շեստակովի հայեցակարգը որոշակի վերապահումներով ընդունելի է այս հիմնախնդրով զբաղվող շատ գիտնականների համար[4][5], սակայն կան նաև հակադիր կարծիքներ: Օրինակ՝ Վ.Ս. Ուստինովը քաղաքական հանցագործությունը ներկայացնում է որպես հանցագործությունների ամբողջություն, որոնք կատարվում են միայն զինված ճանապարհով պետական իշխանությունը բռնի կերպով գրավելու նպատակով. իսկ որպես քաղաքական հանցագործությունների հիմնարար տեսակներ նշում է կուսակցությունները, իշխանության բռնի զավթման, նոր պետության բռնի ստեղծման, այլ պետության տարածքի միացման շարժումները

[1] **Шестаков Д.А.** Понятие, предмет, система и перспективы криминологии // Криминология. Общая часть: учебник / Под ред. В.В. Орехова. – СПб., 1992. - С. 9.

[2] Юридическая энциклопедия / Под общей редакцией д.ю.н. С.Ш. Цагикяна. - Ереван, 2017. - С. 666, 669.

[3] ՀՀ Քրեական օրենսգիրք: Ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153080

[4] **Гилинский Я.И.** Криминология: курс лекций. - СПб., 2002. – С. 243.

[5] **Ward T.** British Journal of Criminology / 2005. Vol. 45, no. 4. P. 162–184.

(ռազմական հեղաշրջում) և օրինական ընտրված իշխանության հակասահմանադրական տեղահանումը (պետական հեղաշրջում)[1]:

Պետական հանցագործությունները քաղաքական հանցագործություններից չտարբերելով՝ հարկ է նշել, որ դրանք փոխկապակցվում են՝ որպես մաս և ամբողջություն: Եթե պետական հանցագործությունն իրենից ներկայացնում է պետությունների և իշխող ուժի ներկայացուցիչների հանցավոր գործունեությունը, որի ընթացքում խախտվում են ինչպես ներքին քրեական օրենքները, այնպես էլ միջազգային իրավունքի նորմերը, ապա քաղաքական հանցագործությունների սուբյեկտներ կարող են լինել ինչպես պետությունն ու իշխանության ներկայացուցիչները, այնպես էլ՝ բնակչությունը: Այս համատեքստում քաղաքական հանցագործությունն ավելի լայն է, քան պետական հանցագործությունը, և պետական հանցագործությունը կազմում է քաղաքական հանցագործությունների բաղկացուցիչ մասը:

Բացի այդ, մենք առաջարկում ենք ընդլայնել քաղաքական հանցագործությունների սուբյեկտների շրջանակը՝ արձանագրելով, որ քաղաքական հանցագործությունների սուբյեկտներ կարող են լինել ոչ միայն պետությունը, բնակչությունը և իշխող վերնախավի ներկայացուցիչները, այլև բոլոր քաղաքական ուժերն ու գործիչները: Այս համատեքստում առավել ընդունելի է Գ.Ն. Գորշենկովի՝ քաղաքական հանցագործությունների սահմանման մոտեցումը, ըստ որի՝ քաղաքական հանցագործությունը դիտարկվում է որպես քրեորեն պատժելի արարքների ամբողջություն, որն ընտրվում է որպես քաղաքական բնույթի նպատակներին հասնելու միջոց[2]: Գրեթե միանման մոտեցում է առաջարկում նաև Վ.Վ. Լունեևան, ով կարծում է, որ քաղաքական հանցագործությունը ներկայացնում է իշխող կամ ընդդիմադիր քաղաքական էլիտաների սոցիալապես վտանգավոր պայքարը իշխանության գալու կամ դրա անօրինական պահպանման համար[3]: Գորշենկովի բնորոշմամբ՝ քաղաքական հանցագործություն ասելով պետք է հասկանալ բոլոր այն քրեորեն պատժելի արարքները, որոնք ուղղված են ինչպես քաղաքական իշխանության գալուն, այնպես էլ պահպանմանը: Իսկ Լունեևը, ի տարբերություն Գորշենկովի,

[1] **Устинов В.С.** Понятие и криминологическая характеристика организованной преступности: лекция. - Н. Новгород, 1993. - С. 14.

[2] **Горшенков Г.Н.** Политическая преступность // Криминология: словарь / Под общ. ред. В.П. Сальникова. – СПб., 1999. – 125 с.

[3] **Лунеев В.В**. Политическая преступность // Криминология: учебник / Под ред. В.Н. Кудрявцева, В.Е. Эминова. 3-е изд., перераб. и доп. – М., 2004. – 289 с.

քաղաքական հանցագործությունների հիմքում դնում է զուտ քաղաքական դրդապատճառները՝ համարելով, որ սա իշխող էլիտայի և (կամ) իշխանության հավակնողների հանցավոր գործունեություն է, որի նպատակը քաղաքական իշխանություն ստանալը կամ պահելն է: Ինչ վերաբերում է քաղաքական հանցագործությունների սուբյեկտների շրջանակի ընդլայնմանը, ապա այս առաջարկը պայմանավորված է ժամանակակից իրողություններով և հատկապես անցումային պետությունների քաղաքական իրողություններով: Մեր խորին համոզմամբ, ամենևին էլ պատահական չէ, որ դեռևս անտիկ աշխարհում կիրառվում էր ինտելեկտուալ ցենզը, որը տարածվում էր ինչպես իշխանության հավակնորդների, այնպես էլ՝ ընտրողների վրա: Այս խնդիրն առավել սուր է դրված հատկապես արդի պայմաններում, սակայն, միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն փաստը, որ ժամանակակից պայմաններում ժողովրդավարական, իրավական պետությունները չեն կարող զրկել քաղաքականապես չզարգացած քաղաքացիներին ընտրական իրավունքից կամ այս կամ այն ընտրական պաշտոնին հավակնելու իրավունքից, ապա ժամանակակից պետությունները քաղաքական ընտրություններից հետո անդառնալի հետևանքներից խուսափելու համար պետք է համապատասխան լուծումներ գտնեն:

Գաղտնիք չէ, որ անցումային և զարգացող երկրներում, որտեղ չկա կայուն միջին խավ, քաղաքացիների մեծամասնությունը ցածր քաղաքական, քաղաքացիական և իրավական գիտակցություն ունի: Եթե սրան գումարենք նաև ընտրապայքարի ժամանակ տարբեր քաղաքական տեխնոլոգիաների և մանիպուլյացիոն գործիքների կիրառման հնարավորությունը, ապա քաղաքացիների քաղաքական անգրագիտության փաստը հաճախ անուշեղեն է ծառայում անազնիվ քաղաքական ուժերի և քաղաքական գործիչների համար, ովքեր նախընտրական արշավների և կառավարման ժամանակ հաճախ անիրական, անկատար, երբեմն հակապետական խոստումներ են տալիս՝ ստանալով ընտրողների ձայները:

Անշուշտ, իշխանության գալու և իշխանությունը պահելու վերը նշված ուղին և՛ հակասահմանադրական է, և՛ հակաժողովրդավարական: Ճիշտ է, այս պարագայում ևս, քաղաքական գործիչները իշխանությունը ստանում են ժողովրդից ստացած քվեի արդյունքում, սակայն այն ոչ թե իրական կամարտահայտության արդյունք է, այլ՝ խաբեության: Հետևաբար, նմանատիպ իրավիճակներից խուսափելու և ժողովրդի կամարտահայտության իրական երաշխիքներ սահմանելու համար իրավական պետությունը պարտավոր է կանխել բոլոր հնարավոր տեսակի երևույթները: Որպեսզի

իշխանության գալու և իշխանությունը պահելու ընթացքում ժողովուրդը չմանիպուլյացվի քաղաքական ուժերի կողմից, անհրաժեշտ է, որպեսզի պետությունը քաղաքականության սուբյեկտներին պարտադրի կառավարման շրջանում առաջնորդվել բացառապես նախընտրական ծրագրերի դրույթներով: Մեր կարծիքով, որպես լուծում կարող է հանդես գալ քաղաքական ուժի կամ քաղաքական գործչի նախընտրական ծրագրից և նախընտրական քաղաքական խոստումներից խուսափելու օրենսդրական ամրագրումն ու քրեականացումը: Ավելին, այն դեպքերում, երբ նախընտրական ծրագրից խուսափելու արդյունքում պետությանը և հասարակությանը մեծ վնաս է հասցվում (օրինակ՝ պաշտպանական քաղաքականության կտրուկ փոփոխության կամ արտաքին քաղաքականության արմատական փոփոխության արդյունքում), ապա պետք է նախատեսել նաև սահմանադրական պատասխանատվություն քաղաքական ուժի համար, որով կարող է այս կամ այն քաղաքական ուժի գործունեությունը որոշակի ժամանակով կասեցվել:

Քաղաքական հանցավորության մի փոքր այլ դրսևորում է քաղաքական կոռուպցիան, որի առանձնահատկությունը պահանջում է արմատական քաղաքական բարեփոխումներ[1]: «Քաղաքական կոռուպցիան պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրեն վստահված պետական իշխանության լիազորությունների և իրավունքների, պետական իշխանության համակարգում պաշտոնական դիրքի և կարգավիճակի, պետական իշխանության մարմնի կարգավիճակի օգտագործումն է՝ անձնական և (կամ) խմբային ապօրինի քաղաքական շահի հետապնդման նպատակով (քաղաքական հարստացում)»:[2] Այստեղ հարկ է նշել, որ ի տարբերություն քաղաքական հանցագործությունների այլ տեսակների, քաղաքական կոռուպցիան թաքնված է և հաճախ անտեսանելի է մնում[3]: Քաղաքական կոռուպցիայի սահմանումից բխում է, որ քաղաքական կոռուպցիայի վերջնական նպատակը նույնպես քաղաքական շահն է, այսինքն՝ քաղաքական իշխանության գալը կամ դրա պահպանումը: Այս իմաստով տեղին է առանձնացնել նաև

[1] **Amundsen I.** 1999. Political Corruption. An Introduction to the Issues / I. Amundsen. - Bergen, Norway, Chr. Michelsen Institute. P. 1-39, https://www.cmi.no/publications/file/1040-political-coiTuption.pdf

[2] **Нисневич Ю.А.** Политическая коррупция: определение, формы проявления, механизм и ресурсы, https://www.hse.ru/mirror/pubs/lib/data/access/ram/ticket/32/14837297842a50d15e56ab9dc5f6f1fc67c482fc85/Artnis89.pdf

[3] **Квон Д.А.** Политическая коррупция: понятие, цели, субъекты / Д.А. Квон, https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-korruptsiya-ponyatie-tseli-subekty/viewer

էլեկտորալ կոռուպցիան, որը քաղաքական կոռուպցիայի հիմնական տարրերից է և նկատվում է հատկապես ընտրությունների կազմակերպման ու անցկացման փուլում:

Քաղաքականապես կոռուպցիոն գործողություններն ուղեկցվում են իրավական ակտերի, երբեմն՝ օրենքների և Սահմանադրության խախտումներով: Քաղաքական կոռուպցիան տեղի է ունենում նաև այն ժամանակ, երբ քաղաքական գործիչներն ամեն կերպ չարաշահում են իրենց իսկ կողմից ընդունված օրենքները, անտեսում կամ շրջանցում են դրանք, և հետագայում էլ վերջինների հովանու ներքո ընդունվում են այնպիսի օրենքներ, որոշումներ, որոնք արտահայտում են ոչ թե հավաքական ժողովրդի, այլ նեղ խմբային և մասնավոր շահերը: Ի վերջո, քաղաքական կոռուպցիան գնալով արմատավորվում է, որի արդյունքում հանգեցնում է ընտրական գործընթացի ամբողջական դեֆորմացման՝ իմիտացնելով ազատ ընտրություններ, իսկ քաղաքական գործիչները, ովքեր իշխանության են եկել «ոչ ազնիվ» ճանապարհով, խոչընդոտում են քաղաքացիների մնացած քաղաքական իրավունքների հետագա իրացմանը արդեն նաև քաղաքական իշխանության իրականացման փուլում: Սա իր հերթին, որպես կանոն, հանգեցնում է ավտորիտար ռեժիմի, ինչը բացառում է որևէ քաղաքական իրավունքի առկայությունը, իսկ ընդդիմությունը վերածվում է քաղաքական «բուտաֆորիայի» կամ, ինչպես ընդունված է ասել, «գրպանային ընդդիմության»:

5. Ամփոփում

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ քաղաքական հանցագործությունները, ի տարբերություն հանցագործությունների այլ տեսակների, առանձնանում են իրենց բարդությամբ և բազմաշերտությամբ: Այս հանցագործությունների «արդյունքները» դոմինոյի էֆեկտով թափանցում են հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներ՝ ավերելով խաղաղ համակեցության կայուն մեխանիզմները:

Քաղաքական հանցագործությունների կանխարգելման համար ժամանակակից իրավական, ժողովրդավարական երկրները բարձրագույն օրենսդրական մակարդակում պետք է ամրագրեն, որ քաղաքական ուժերը՝ քաղաքական կուսակցությունները, քաղաքական դաշինքները, հետաքրքրությունների խմբերը, առանձին քաղաքական գործիչները, քաղաքական իշխանության գալուց հետո, բացի ֆունկցիոնալ պարտավորություններից, պետք է կրեն նաև ծրագրային պատասխանատվություն: Այս պահանջը մի

կողմից կարող է քաղաքական գործիչներին զերծ պահել քաղաքական անպատասխանատու խոստումներից, մյուս կողմից՝ ապահովել երաշխավորված հանգիստ նախընտրական և հետընտրական գործընթացները:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Мирумян К.А.** История политической науки. Часть 1: Эпоха античности. - Ереван: Издательство РАУ, 2004. - 299 с.
2. **Plato,** Statesman / 311 c., http://www.perseus.tufts.edu/hopper/text.jsp?doc=Perseus%3Atext%3A1999.01.0171%3Atext%3DStat.
3. **Thomas R. Martin.** An Overview of Classical Greek History from Mycenae to Alexander / M.R. Thomas. - TRM OV 15.8, http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=TRM+OV+15.8&fromdoc=Perseus%3Atext%3A1999.04.0009
4. **Aristotle,** Politics /translated by Benjamin Jowett, https://socialsciences.mcmaster.ca/econ/ugcm/3ll3/aristotle/Politics.pdf
5. **Сырых В.М.** Теория государства и права. - Москва: Юстицинформ, 2006.
6. **Арутюнян А.Р.** Международные методологические основы избирательного права (От античности до современности: философско-правовое измерение) // Мудрость. – 2(19)2021.
7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), հոդված 2: Ընդունվել է 06.12.2015 թ. հանրաքվեով, https://concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra/sahmanadrowt-yown-2015-t-vakani-dektemberi-6-i-hanrak-veov-endownvats-p-op-okhowt-yownnerov
8. **Зорин А.В.** Криминология политической преступности как частная криминологическая теория, https://cyberleninka.ru/article/n/kriminologiya-politicheskoy-prestupnosti-kak-chastnaya-kriminologicheskaya-teoriya/viewer
9. **Шестаков Д.А.** Понятие, предмет, система и перспективы криминологии // Криминология. Общая часть: учебник / Под ред. В.В. Орехова. – СПб., 1992.
10. Юридическая энциклопедия / Под общей редакцией д.ю.н. С.Ш. Цагикяна. - Ереван, 2017.
11. ՀՀ Քրեական օրենսգիրք: Ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153080
12. **Гилинский Я.И.** Криминология: курс лекций. - СПб., 2002.
13. **Ward T.** British Journal of Criminology / 2005. Vol. 45, no. 4.
14. **Устинов В.С.** Понятие и криминологическая характеристика организованной преступности: лекция. - Н. Новгород, 1993.

15. **Горшенков Г.Н.** Политическая преступность // Криминология: словарь / Под общ. ред. В.П. Сальникова. – СПб., 1999. – 125 с.

16. **Лунеев В.В.** Политическая преступность // Криминология: учебник / Под ред. В.Н. Кудрявцева, В.Е. Эминова. 3-е изд., перераб. и доп. – М., 2004. – 289 с.

17. **Amundsen I.** 1999. Political Corruption. An Introduction to the Issues / I. Amundsen. - Bergen, Norway, Chr. Michelsen Institute. - P. 1-39, https://www.cmi.no/publications/file/1040-political-coiTuption.pdf

18. **Нисневич Ю.А.** Политическая коррупция: определение, формы проявления, механизм и ресурсы.

19. https://www.hse.ru/mirror/pubs/lib/data/access/ram/ticket/32/14837297842a50d15e56ab9dc5f6f1fc67c482fc85/Artnis89.pdf

20. **Квон Д.А.** Политическая коррупция: понятие, цели, субъекты / Д.А. Квон, https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-korruptsiya-ponyatie-tseli-subekty/viewer

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ ФОРМИРОВАНИЯ ВЫБОРНЫХ ОРГАНОВ ПУБЛИЧНОЙ ВЛАСТИ

Аннотация

Статья посвящена исследованию ряда нюансов преступлений против формирования выборных органов государственной власти. Изучая специфику проблем формирования выборных органов государственной власти, утверждается, что с точки зрения конституционализации правовых норм в сфере политики необходимы новые подходы к решению этой проблемы.

Ключевые слова: публичная власть, преступность, право, политика, государство.

SOME FEATURES OF CRIMES AGAINST THE FORMATION OF ELECTED PUBLIC AUTHORITIES

Annotation

The article is devoted to the study of a number of nuances of crimes against the formation of elected public authorities. Examining the specifics of the

problems of forming elected public authorities, it is stated that from the point of view of the constitutionalization of legal regulations in the field of politics, there is a need to form new approaches to this issue.
Keywords: public power, crime, law, politics, state.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 12.06.2025 թ., գրվել է գրախոսության 14.06.2025 թ., ընդունվել է տպագրության 20.06.2025 թ.: